Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

175
4
619

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՔ!

ԱՆԱՍՆԱԲՈՒԹԱԿԱՆ

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

1924 թ.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գատ. 4542 Գրատ. 324 բ. Տիրաժ 1500

2017

Հ. Ս. Խ. Հ.

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

Հաստատված է Հ. Ս. Խ. Հ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից։
1924 թ. մայիսի 11-ին

ՄԱՍ Ն I

Պետական անասնաբուժության հիմնական անելիքները յեվ Հողագործության ժողովրդական Կոմիսարիատի պարտականությունները նրանց իրագործման նկատմամբ։

Հոդ. 1.—Պետական Անասնաբուժության հիմնական անելիքներն են.

ա) ընտանի կենդանիների վարակիչ և համաճարակ հիվանդությունների առաջն առնելու և նրանց վերջ տալու համար միջոցներ կազմակերպելն ու կիրարկելը.

բ) անասնաբուժական սանիտարական հսկողության կազմակերպությունը.

գ) բնակչության անասնաբուժական ոգնության կազմակերպությունը.

դ) ժողովրդական առողջապահությունը մարդկանց և կենդանիների ընդհանուր վարակիչ և պարազիտար հիվանդությունների հանդեպ։

Հոդ. 2.— 1-ին հոդվածում հիշատակված անելիքներն իրագործելու համար Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին անասնաբուժական գործի վերաբերմամբ հանձնարարվում է.

1. անասնաբուժական բոլոր ձեռնարկելիք միջոցների ընդհանուր ծրագրի մշակությունն ու նրա կիրարկության ղեկավարությունը.

2. Հ. Ս. Խ. Հ. սահմանների պաշտպանությունը կենդանիների վարակիչ և համաճարակ հիվանդություններից և հարկ եղած դեպքերում թե պետական և թե ներքին սահմանների վրա պաշտպանության արգելագոտիներ ստեղծելը.

3. կենդանիների վարակիչ և համաճարակ հիվանդությունների դեմ մաքառելու միջոցներ կազմակերպելը.

4. անասնաբուժական-սանիտարական հսկողության ընդհանուր ղեկավարությունն ու կազմակերպությունը սպանդանոցներում, սպանդավայրերում, առուցարաններում և մսամթերքների այլ պահեստներում, այդ մթերքների առևտրի և մշակության տեղերում, անասունների բոլոր հավաքավայրերում և վաճառատեղերում, այն բոլոր տեղերում ու հիմնարկություններում, որտեղ հում անասնամթերքներ են մշակվում և ոգտագործվում, այլ և նրանց վաճառատեղերում, նմանապես և բոլոր պետական, կոոպերատիվ և մասնավոր հիմնարկություններում ու ձեռնարկություններում, որոնց վերաբերմամբ մշտական անասնաբուժական հսկողություն է նախատեսված սույն Կանոնադրքով (հոդ. 12, կ. «բ»).

5. անասնաբուժական գործի ընդհանուր ղեկավարությունը և անասնաբուժական շրջաններում բուժարաններ, ամբուլատորիաներ ու բուժակային կայաններ կազմակերպելը, այլ և բնակչության տներում անասնաբուժական ոգնություն հասցնելը.

6. անասնաբուժական-կրթական գործունեության ղեկավարությունը և նրա կազմակերպությունը.

7. անասնաբուժական-սանիտարական անցակայանների ընդհանուր ցանց սահմանելը սովորական, երկաթուղային և ջրային ճանապարհներով անասունների և հում անասնամթերքների տեղափոխության վրա հսկելու համար.

8. անասնաբուժական շրջանների ցանցի կազմակերպությունը.

9. անասնաբուժական ձեռնարկելիք միջոցների վերաբերյալ որինագծեր մշակելն ու անցկացնելը.

10. Մասնակցություն Անդրկովկասյան և դաշնակից Հանրապետությունների խորհրդակցություններին և համագումարներին այն բոլոր խնդիրների առթիվ, որոնք վերաբերում են՝

ա) Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության սահմանները հարևան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություններից կենդանիների համաճարակ հիվանդությունների մուտքից պաշտպանելուն։

բ) Հ. Ս. Խ. Հ. սահմաններից հարևան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություններն արտահանվող և նույն Հանրապետություններից Հ. Ս. Խ. Հ. ներմուծվող կենդանիների և հում անասնամթերքների անասնաբուժական-սանիտարական անվնասությունն ապահովելուն և

գ) կենդանիների և հում անասնամթերքների առևտրին։

11. Մասնակցություն այնպիսի ձեռնարկությունների մեջ, որոնց նպատակն և անասնաբուժական կրթության կանոնավոր կազմակերպությունը և աջակցություն նրա զարգացմանը.

12. մասնակցություն ընտանի կենդանիների սատկելուց պետական ապահովագրության հիմունքների մշակության մեջ.

13. անասնաբուժական վիճակագրության կազմակերպությունը և ամբողջ անասնաբուժական անձնական կազմի հաշվառությունը.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Անասնաբուժական անձնական կազմի հատուկ հաշվառությունը կատարում է Ռազմական Կոմիսարիատը։

14. պետական փորձաքննության կազմակերպությունը անասնաբուժական ինդիրների նկատմամբ.

15. անասնաբուժական գիտական հետազոտությունների և գիտական-գործնական ինստիտուտների, լաբորատորիաների և դիագնոստիքական կաբինետների ցանցի կազմակերպությունն ու զարգացումն.

16. մասնակցություն Կարմիր Բանակի անասնաբուժական-սանիտարական մասի կանոնավոր կազմակերպության հետ կապված խնդիրների մշակության մեջ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. «ՀՍԽՀ Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատն իրավունք և վերապահվում՝ մյուս Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի հետ համաձայնության գալով, հանձնարարելու նրանցից մեկին մասնակցել Խ. Ս Հ. Մ. զինվորական գերատեսչության հետ միասին զինվորական անասնաբուժական—սանիտարական մասի խնդիրների մշակությանը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 2. Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի վորոշումները կենդանիների համաճարակի դեմ մաքառելու վերաբերմամբ պարտադիր են Կարմիր Բանակի անասնաբուժական մասի համար։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 3. Այն բոլոր ձեռնարկելիք միջոցները, որոնց իրագործման համար պահանջվում է Հայաստանի զինվորական և քաղաքացիական անասնաբուժության մարմինների միասնական համերաշխ գործակցությունը, գործադրվում են սույն կետում և ծանոթություններում մատնանշված գերատեսչությունների համաձայնությամբ և պատշաճ դեպքերում ներկայացվում են ի հաստատություն Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին։

17. Սահմանված կարգով անասնաբուժական անձնական կազմի

ՀԱՄԱՐ
Գրանցված
II-24121գ/ա

աշխատակոչ հայտարարելը կենդանիների համաճարակների դեմ Հանրապետության սահմաններում մաքառելու համար.

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ — Կարմիր Բանակի անասնաբուժական անձնական կազմը կանչվում է կենդանիների համաճարակի դեմ մաքառելու համար միայն Ռազմական Կոմիսարիատի համաձայնությամբ և նրա կարգադրություններով։

18. հսկողություն այն բոլոր լաբորատորիաների, գործարանների և այլ ձեռնարկությունների վրա, որ պատրաստում են պաշտպանող և բուժիչ շիճուկներ, մանրեական, դեղագործական և անասնաբուժական գործածության համար այլ պրեպարատներ.

19. վերահսկողություն 18-րդ կետում մատնանշված հիմնարկությունների պատրաստած և արտասահմանից բերված պրեպարատների վրա.

20. հսկողություն ազատ գործող անասնաբուժերի և բուժակների գործունեության, այլ և բոլոր բուժարանների, ամբուլատորիաների և անասնաբուժական այլ հիմնարկությունների վրա.

21. բնակավայրերում գործող որենսդրությամբ նախատեսված անասնաբուժա-սանիտարական հոգաբարձություններ և այլ կազմակերպություններ ստեղծելը ընտանի կենդանիների վարակիչ և համաճարակ հիվանդությունների առաջն առնելու և նրանց վերջ տալու համար ձեռք առնվող միջոցների իրագործմանը բնակչությանը մասնակից անելու նպատակով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Անասնաբուժա — սանիտարական հոգաբարձությունները կազմվում են Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի և գավառական Գործադիր Կոմիտեների մասնավոր վորոշումների հիման վրա։

ՄԱՍ II

Պայքար կենդանիների վարակիչ և համաճարակ հիվանդությունների դեմ

ՀԱՏՎԱԾ I.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ։

Հոդ. 3.— Վարակիչ և համաճարակ հիվանդությունների առաջն առնելու և նրանց վերջ տալու համար սույն հատվածով նախատեսված միջոցները տարածվում են ամեն տեսակ ընտանի կենդանիների և թռչունների վրա։

Հոդ. 4.— Սույն Կանոնադրքով նախատեսված անասնաբուժա-սանիտարական միջոցները ձեռք են առնվում ընտանի կենդանիների և թռչունների հետևյալ վարակիչ և համաճարակ հիվանդությունների դեմ. 1—յեղջյուրավոր անասունների ժանտախտի, 2—խոշոր յեղջյուրավոր անասունների համաճարակ թոքատապի, 3—դաբաղի, 4—սիբիրախտի, 5—սիմպտոմատիկ (խշխշան) պարալի, 6—մարգարտախտի (տուբերկուլյոզ), 7—կատաղության, 8—ընտանի և վայրի կենդանիների համաճարակ տենդախտի և լանջարատախտի (արյունահոս սեպտիցիմիա), 9—խոշոր յեղջյուրավոր անասունների և ձիերի համաճարակ վիժման, 10—խոշոր յեղջյուրավոր անասունների վարակիչ վագինիտի (կովերի ծնափողի վարակիչ բորբոքումն), 11—քոսի, 12—վոչխարների ծաղկի, 13—միամրակների խլախտի, 14—ձիերի համաճարակ լիմֆանգոիտի (աֆրիկյան խլախտ), 15—ձիերի ժանտահարբուխի, 16—ձիերի ինֆլուենցայի և վարակիչ թոքատապի, 17—ձիերի զուգավորման հիվանդության, 18—ձիերի համաճարակ վոլնուղեղային մենինգիտի (գլխի և վողնաշարի ուղեղի թաղանթի համաճարակ բորբոքումը), 19—խոզերի կարմիր քամու, 20—խոզերի ժանտախտի, 21—թռչունների խոլերայի, 22—հավերի ժանտախտի, 23—թռչունների բկուռուցքի (ծաղիկ)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Անհրաժեշտության դեպքում սույն Կանոնադրքում հիշատակված միջոցները հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի կարգադրությամբ կարելի է տարածել նաև կենդանիների այլ վարակիչ ու համաճարակ հիվանդությունների և բացի ընտանիներից նաև այլ կենդանիների վրա։

Հոդ. 5.—Վատնդավորության աստիճանի համեմատ հիվանդանալու և հիվանդության տարածվելու տեսակետից կենդանիները բաժանվում են յերեք կարգի. ա—վարակիչ հիվանդություններով հիվանդ, այսինքն՝ վոր տվյալ հիվանդության բացահայտ նշաններն ունին. բ—հիվանդ լինելու տեսակետից կասկածելի, այսինքն՝ վոր ունին հիվանդության այնպիսի անորոշ նշաններ, վոր միայն կասկածել են տալիս տվյալ վարակիչ հիվանդությամբ հիվանդացած լինելու մասին, բայց բավականաչափ հատկանշական չեն հիվանդությունը ճշտիվ վորոշելու համար գ.—վարակված լինելու կողմից կասկածելի, այսպես են համարվում յուրաքանչյուր հիվանդության համար սահմանված վորոշ ժամանակի ընթացքում այն կենդանիները, վորոնց վրա թեև վարակիչ հիվանդության նշաններ դեռ չեն յերևում, բայց վորոնք շփումն են ունեցել հիվանդ կամ հիվանդացած լինելու կողմից կասկածելի կենդանիների կամ

վարակված առարկաների հետ և առհասարակ գտնվել են այնպիսի պայմաններում, որ կարող էին վարակվել։

ՀԱՏՎԱԾ II.

ՎԱՐԱԿԻՉ ՅԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

ԳԼՈՒԽ I.

Հ. Ս. Խ. Հ. ՈՏԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՎԱՐԱԿԻՉ ՅԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

Հոդ. 6.— Ոտար պետություններից կենդանիներ և հում անասնամթերքներ բերվում են ԽՍՀՄ արտասահմանի համապատասխան ներկայացուցիչների վավերացված վկայականներով, նրանց անասնաբուժական սանիտարական ապահովության մասին, նոր պիտի տան այն յերկրի կառավարական անասնաբուժերը, որտեղից բերվում են կենդանիներն ու հում անասնամթերքները։

Հոդ. 7.—Կենդանիներն ու հում անասնամթերքները, որ բերվում են Հ. Ս. Խ. Հ. այն ոտար պետություններից, որտեղ բոլորովին չկա կամ թույլ է կազմակերպված անասնաբուժական սանիտարական հսկողությունը, կարող են ներմուծվել կենդանիները՝ սահմանի վրա նշանակված կարանտինի ժամանակը լրանալուց հետո, իսկ մթերքները, հատուկ կանոններով սահմանված պայմանները կատարելուց հետո։

Հոդ. 8.— Կենդանիներ, այլ և հում անասնամթերք բերելն ոտար պետություններից թույլ է տրվում միայն Հողագործության Ժողովրդական կոմիսարիատի պատշաճ գերատեսչության համաձայնությամբ այդ նպատակով որոշված սահմանակետերի վրայով և այդ փոխադրության համար սահմանված կանոններով։

Հոդ. 9. Սահմանն անցնելու կետերի թիվը կարող է ժամանակավորապես սահմանափակվել՝ նայելով ոտար պետությունների ապահովության աստիճանին կենդանիների վարակիչ հիվանդության տեսակետից։

Հոդ. 10.— Կենդանիներ, այլ և հում անասնամթերքներ, կեր և այլ այնպիսի առարկաներ ներմուծելը Հ. Ս. Խ. Հ. սահմանները և նրա միջով անցկացնելը, որ կենդանիների վարակիչ հիվանդությունների կողմից վտանգավոր հանդիսացող ոտար պետություններից վարակումը նեղս բերելու աղբյուր կարող են լինել, կարելի է արգելել Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի և Ժողովրդական կոմիսարների Խորհրդի համաձայնությամբ սահմանած ժամանակով։

Հոդ. 11. Ոտար պետություններից վարակիչ հիվանդություններ նեղս բերելու հատուկ վտանգ լինելու դեպքում 9 և 10 հոդվածներով նախատեսված միջոցները բացառիկ դեպքերում կարող են ձեռք առնել սահմանակից շրջանների գավառական գործադիր կոմիտեները, անհապաղ հեռագրով տեղեկացնելով Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին թե ձեռք առած միջոցների և թե այդ միջոցները ձեռք առնելու պատճառների մասին։

Հոդ. 11. ա) Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի Անասնաբուժական Վարչությունն և հանձնվում որոշել. թե ինչ միջոցներ պիտի ձեռք առնվեն հարևան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություններից Հայաստանի սահմանները կենդանիների վարակիչ և համաճարակ հիվանդություններ նեղս բերելու առաջն առնելու և նրանց վերջ տալու համար, յեթե ծագելու լինեն այլ և սահմանել այդ միջոցներն ի կատար ածելու կարգը և վերահսկողություն ունենալ նրանց կատարման վրա։

Հոդ. 11. բ) Հարևան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություններից կենդանիները բերելու այլ և հում անասնամթերք ներմուծելու համար Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը սահմանում է հատուկ կայաններ։

Հոդ. 11. գ) 11 ա. և 11 բ. հոդվածներում մատնանշված միջոցներն ի կատար ածելու կանոնները մշակում է Հողժողկոմատը և հաստատում է Հայաստանի Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը։

ԳԼՈՒԽ II

Հ. Ս. Խ. Հ. ՆԵՐՍԸ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՎԱՐԱԿԻՉ ՅԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆ ԱՌՆԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՎԵՐՋ ՏԱԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈՑՆԵՐ

Հոդ. 12.—Կենդանիների վարակիչ և համաճարակ հիվանդությունների առաջն առնելու և նրանց վերջ տալու նպատակով սահ-

մանվում է մշտական անասնաբուժական-սանիտարական հսկողություն.

ա) ամեն տեսակ կենդանիների և թռչունների, ինչպես նաև հում անասնամթերքների փոխադրության վրա սովորական, յերկաթուղային և ջրային ճանապարհներով։

բ) կենդանիների հավաքավայրերի, այլ և այն տեղերի վրա, որտեղ ստացվում, պահվում, վաճառվում և մշակվում են հում անասնամթերքները, սպանդանոցների և այլ սպանդավայրերի, անասունների իջևանների, անասունների տոնավաճառների, շուկաների, խանների, փոստի կայանների, կենդանիներ և թռչուններ գիրացնելու տեղերի, ազնվացեղ անասունների բուծարանների, կաթնատնտեսական ագարակների և կոմիսի գործարանների, ձիաբուծարանների, զուգավորման կայանների, կենդանիների և թռչունների ոճուրդների և ցուցահանդեսների, անասնաբուժարանների, մսի ընդունության կայանների, սառցարանների, հում անասնամթերքների պահեստների, այդ մթերքները մշակող կաշեգործարանների, վոկերաղացների, սոսնձի գործարանների և այլն, հիվանդ կենդանիներ ու դիակներ ոգտագործող գործարանների, անասունների գերեզմանոցների, դիահատության տեղերի, կասկածելի կենդանիների մեկուսացման շենքերի և այլն։

Հոդ. 13.—Կենդանիների և հում անասնամթերքների տեղափոխության, նրանց հավաքելու և առևտրի տեղերի, հում անասնամթերքներ պահելու և մշակելու տեղերի (հոդ. 12) հետ կապ ունեցող հիմնարկություններ բանալու, կազմակերպելու, անասնաբուժական-սանիտարական պահանջների համաձայն սարքավորելու, պահելու և նրանց գործունեության պայմաններն ու կարգը, այլ և հսկողության իրագործման կարգը վորոշվում են հատուկ կանոններով ու հրահանգներով, վոր հրատարակվում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի հետ միասին, Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի և այլ շահագրգռված գերատեսչությունների համաձայնությամբ։

Հոդ. 14.— Վարակիչ և համաճարակ հիվանդությունների առաջն առնելու և նրանց վերջ տալու համար կիրարկվում են հետևյալ միջոցները։

1. ցուցակագրություն բնատնի կենդանիների և թռչունների

համաճարակ հիվանդությունների դեպքերի, վորոնց դեմ սույն Կանոնագրքի 4-րդ հոդվածի համաձայն կանխարգել և վերջ տալու միջոցներ են սահմանվում.

2. կենդանիներին սպանելը, թույլ տալով ապա գործադրել նրանց վորպես մսացու, հիվանդություն յերևան յեկած վայրերում կամ անասնաբուժական հսկողության տակ գտնվող սպանդանոցներում ու սպանդավայրերում.

3. կենդանիներին սպանելը, թույլ տալով նրանց դիակները տեխնիկական մշակությամբ ոգտագործել կամ թե այրելով կամ թաղելով.

4. պատվաստումներ նախազգուշական և հարկադրյալ, բուժիչ և ախտացույց.

5. հիվանդ և հիվանդացած լինելու կողմից կասկածելի կենդանիներին բժշկելը համապատասխան անասնաբուժի ձեռքով, արգելելով պատշաճ դեպքերում ուրիշներին այդպիսի բժշկությամբ զբաղվել։

6. Կենդանիների մեկուսացումը (կարանտինի յենթարկելը) անասնաբուժական հսկողություն գործադրելով, վորի տակ յեղած ժամանակ կենդանիներն առանձնացած շենքերում կամ տեղերում պահվեն. այդ ժամանակի ընթացքում արգելվում է կենդանիներին դուրս տանել ընդհանուր արոտատեղերը կամ մյուսների հետ ջրելու և առհասարակ մեկուսացրած շենքերից կամ տեղերից դուրս, նրանց մոտ այլ կենդանիներ կամ կողմնակի անձինք թողնել, մսի համար կամ այլ նպատակներով մորթել առանց համապատասխան անասնաբուժի նախազգուշության ու թույլտվության։

7. Կենդանիների վրա անասնաբուժական հսկողություն սահմանելը, վորի տակ յեղած ժամանակ կենդանիները պահվում են սովորական պայմաններում, միայն թե արգելվում է նրանց վաճառելն ու մորթելը մսի համար՝ առանց անասնաբուժի գննության ու թույլտվության։

8. յեղած կենդանիների, նրանց հավելման և նվազման հաշվառությունը, ընդհանուր կամ մասնակի հետազոտությունը վարակված կամ անապահով վայրերում.

9. առանց պատշաճ անասնաբուժի թույլտվության՝ վարակված տեղից և վարակիչ հիվանդությունների կողմից անվստահելի վայրերից դուրս վարակվող կենդանիները և այդպիսի կենդանիներից ստացված հում մթերքներ դուրս տանելն արգելելը.

10. վարակված կամ անվստահելի վայրի սահմանները այնպիսի կենդանիներ բերելն արգելելը, որ դյուրավ կարող են վարակել յերևան յեկած հիվանդությամբ, այլ և այդպիսի կենդանիներով այնտեղից անցնելը ու նրանց անցկացնելն արգելելը.

11. կենդանիներ անցկացնելու համար կողմնակի ճանապարհներ սահմանելը,

12. խոզ, կատու, շուն, թռչուններ և այլ մանր ընտանի կենդանիներ ազատ դուրս թողնելն արգելելը, որ թեև դյուրավ չեն վարակվում ովյալ հիվանդությամբ, բայց ընդունակ են վարակումը տարածելու.

13. առողջ անասունների արոտի և ջուր խմելու վայրերը փոխելը.

14. ովյալ հիվանդությամբ դյուրավ վարակվող կենդանիներին միատեղ արածացնելը, ջրելն ու լողացնելն արգելելը.

15. զուգավորություններն արգելելը.

16. անասնություններում կամ անվստահելի վայրերում վարակիչ հիվանդություններ յեղած դեպքում կենդանիների արյունահոս անդամահատություն, ինչպես նաև կրակն արգելելը առանց պատշաճ անասնաբուժի թույլտվության, յերբ այդպիսի գործողությունները կարող են վտանգավոր լինել.

17. հարկ յեղած դեպքում վարակված անասության կենդանիների վրա կապարակնիք ու դրոշմ դնելը, այլ և այս կամ այն գոմն ու շենքը կնքելը.

18. մարդկանց մուտքը վարակված անասությունները սահմանափակելն ու վարակված կենդանիների և առարկաների հետ շփումն ունեցող անձանց դյուրավ վարակվող կենդանիների հետ շփումն ունենալն արգելելը՝ առանց անասնաբուժի ցուցմունքով նախապես ձեռնոցը, վոտները, հագուստը, վոտնամաններն ախտահանելու.

19. վարակված կամ անվստահելի վայրերից առանց պատշաճ անասնաբուժի թույլտվության հում անասնամթերքներ, խոտ ու պարան և այլ կեր ու վարակման աղբյուր լինելու ընդունակ առարկաներ դուրս տանելն արգելելը.

20. հիվանդ և վարակիչ հիվանդություններով հիվանդացած լինելու կողմից կասկածելի կենդանիներից ստացված կաթնեղենի և այլ սանձ սեռակ ուտեստի վաճառումն ու նրանցից մարդկանց

համար ուտելիք և կենդանիների կեր պատրաստելն արգելելը, առանց նախապես այդ մթերքներն անվնաս դարձնելու.

21. Պատշաճ դեպքերում հում անասնամթերքները փոխադրելն արգելելը՝ առանց ծրագրելու և ախտահանելու, որ պահանջվում է այդ առթիվ հրատարակվող հրահանգներով.

22. Հիվանդ ու հիվանդացած լինելու կողմից կասկածելի կենդանիների դիակներն ու կաշին, խուզքին, քակորը ու այլ անպետք մնացորդները հավաքելն ու տալ այրելը կամ բավականաչափ խոր թաղելը, այլ և վոչնչացնելը ամեն տեսակ վարակված առարկաների, որ չի կարելի մաքրել և ախտահանել.

23. մաքրելն ու ախտահանելը հիվանդ և վարակիչ հիվանդություններով վարակված լինելու կողմից կասկածելի կենդանիների գոմերի և նրանց գտնված այլ տեղերի, այլ և այն առարկաների, որ շփումն են ունեցել այդ կենդանիների կամ նրանցից ստացված հում անասնամթերքների ու անպետք մնացորդների հետ.

24. վարակված վայրում ցուցահանդեսներ, աճուրդներ, տոնավաճառներ և կենդանիների այլ հավաքույթներ արգելելը կամ այդ հավաքույթները միայն որոշ կենդանիներով սահմանափակելը.

25. վարակված կամ անվստահելի վայրերում կարանտինի արգելարաններ կամ կարանտինի պաշտպանողական գծեր սահմանելը.

26. վարակիչ կամ համաճարակ հիվանդություն յերևան յեկած վայրերը, իսկ հարկ յեղած դեպքերում նաև սահմանակից վայրերը, ովյալ վարակիչ հիվանդության կողմից անապահով հայտարարելը, իսկ ավելի հեռավոր, բայց անտեսապես անապահով տեղի հետ կապ ունեցող վայրերը վտանգված, այլ և այդ մասին բնակչությանն հայտարարելը.

27. բնակչությանը յերևան յեկած հիվանդության եությանը ծանոթացնելը, ինչպես նաև նրանցից պաշտպանվելու և նրա դեմ մարտնելու յեղանակներին։

28. ժամանակավորապես ամբողջ շրջաններում (մի քանի գավառներից բաղկացած) սովորական ճանապարհներով կենդանիների անցկացնելն արգելելը և նրանց յերկաթուղով պարտադիր փոխադրություն սահմանելը։

Սույն հոդվածի 1, 23 և 27 կետերում հիշատակված միջոցները կիրարկվում են սույն Կանոնագրքի 4-րդ հոդվածում մատնա-

նշված բոլոր վարակիչ և համաճարակ հիվանդությունների ժամանակ։

Իսկ սույն հոդվածի մեջբերյալ կետերում հիշատակված միջոցները կիրարկվում են վորոշ վարակիչ հիվանդությունների ժամանակ սույն Կանոնագրքի 15—54 հոդվածների հիման վրա։

ԳԼՈՒԽ III

ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐ ՎՈՐՈՇ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՏԱԽՏ

Հոդ. 15.— Նայելով, թե վորչափ է տարածված յեղջյուրավոր անասունների ժանտախտը, ինչ նպատակի համար են կենդանիները և ի նկատի ունենալով տեղական պայմանները, կամ բոլոր հիվանդները, հիվանդացած կամ վարակված լինելու կողմից կասկածելիները սպանվում են կամ հակաժանտախտային պատվաստումներ են տրվում վարակված լինելու կողմից կասկածելիներին, նույնպես և հիվանդացած լինելու կողմից կասկածելիները բժշկվում են շիճուկով, իսկ ակնհայտնի հիվանդները սպանվում են։

Հոդ. 16.— Յեթե սպանվում են վարակված լինելու կողմից կասկածելի կենդանիները, անասնամթերքի ոգտագործումը կարող է թույլ տրվել հատուկ կանոնների համաձայն։

Հոդ. 17.— Ժանտախտով վարակված և ժանտախտի կողմից անապահով հայտարարված վայրերը մեկուսացվում են կարանտինի արգելարաններով կամ շղթաներով և կիրարկվում են սույն Կանոնագրքի 14-րդ հոդվածով նախատեսվածներից անհրաժեշտ միջոցները։

Հոդ. 18.— Յերբ կատարվում են հակաժանտախտային պատվաստումներ վարակված վայրերը ժանտախտի կողմից ապահով են հայտարարվում կենդանիների սատկելու, առողջանալու և պատվաստումներից հետո բեակցիայի լրանալու վերջին որից 14 որ անցնելուց հետո։ Այն դեպքում յերբ վարակված վայրերում կիրառվում են միայն կենդանիների սպանելու միջոցները, այդ վայրերը ժանտախտի կողմից ապահով են հայտարարվում կենդանիներին սպանելու կամ սատկելու վերջին դեպքից 21 որ անցնելուց հետո։ Թյուրքիայի և Պարսկաստանի սահմաններից անցկացնելու անասունները կարանտինում պահվում են 21-որ։

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿ ԹՈՔԱՏԱՊ

Հոդ. 19— Այն կենդանիները, վոր ակնհայտնի հիվանդ են սուր կամ քրոնիկական թոքատապով, այլ և կասկածելի յեն հիվանդացած լինելու կողմից, պիտի սպանվեն։

Հոդ. 20.— Յեթե համաճարակ թոքատապն անցնում է այն շրջանները, վոր մինչև այդ ապահով են յեղել այդ հիվանդության կողմից, վարակված լինելու կողմից կասկածելի կենդանիները նույնպես պիտի սպանվեն։

Հոդ. 21.— Այն շրջաններում ու վայրերում, վորտեղ վաղուցվանից ու շատ է տարածված համաճարակ թոքատապը, հիվանդ ու հիվանդացած լինելու կողմից կասկածելի կենդանիները պիտի սպանվեն. վարակված լինելու կողմից կասկածելի կենդանիներին կարելի յե հարկադրաբար սրսկումներ անել (հոդ. 14, կ. 4), վորի ընթացքում այդ կենդանիները անասնաբուժական հսկողության տակ են պահվում (Հոդ. 14, կ. 6)։ Այդպիսի շրջաններում ու վայրերում թույլ են տրվում նաև նախազգուշական պատվաստումներ։

Հոդ. 22.— Սպանված կենդանիների (հոդ. 19, 20 և 21) միսը թույլ է տրվում կերակրի համար գործածել մսամթերքների անպետք հայտարարելու կանոնների հիման վրա, իսկ կաշին թույլ է տրվում ոգտագործել միայն նաապես սխտահանելուց հետո։

Հոդ. 23.— Համաճարակ թոքատապի կողմից անապահով հայտարարված վայրերում բոլոր յեղջուրավոր անասունները պահվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 7) և կիրառվում է 14 հոդվածի 9 կետը։

Հոդ. 24.— Վարակված վայրերում, բացի սրանցից, կիրարկվում են պատշաճ միջոցներ 14 հոդվածի 8—14, 17—21, 24—26 կետերով նախատեսվածներից։

ԴԱԲԱՂ

Հոդ. 25.— Դարաղով վարակված և անապահով վայրերում կիրարկվում են պատշաճ միջոցներ սույն Կանոնագրքի 14 հոդվածի 5—15, 17—21, 24—26 կետերով նախատեսվածներից։

Հոդ. 24.— Վարակված տնտեսություններում, հոտերում և խմբերում հարկ յեղած դեպքում պատվաստվում են բոլոր կենդանիները։

ՍԻԲԻՐԱԽՏ ՅԵՎ ՍԻՄՊՏՈՄԱՏԻԿ (ԽՇԽՇԱՆ) ՊԱԼԱՐ

Հոդ. 27.— Անապահով տնտեսություններում, հոտերում և գյուղերում, այլև անապահով հայտարարված վայրերում պաշտպան միջոցներ են կիրարկվում սույն կանոնագրքի 14 հոդվածով նախատեսվածներից, բացի 2, 3 և 28 կետերում մատնանշվածներից։

ՄԱՐԳԱՐՏԱԽՏ (ՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶ)

Հոդ. 28. — Այն կենդանիները, որ ակներև հիվանդ են և ընդհանուր հյուծախտի նշաններ ունեն կամ որոնց կուրծն է փչաված, սպանվում են (հոդ. 14, կ. 2)։

Հոդ. 29.— Այն կենդանիները, որ 28 հոդ. հիշատակված նշանները չունեն, բայց հիվանդ կամ հիվանդացած լինելու կողմից կասկածելի են ճանաչված, մեկուսացվում են և մնում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6).—այդպիսիների կաթը մարդկանց և կենդանիների համար կարող է ուտելի լինել միայն նախապես ախտահանելուց հետո։

Հոդ. 30.— Այն կենդանիները, որոնց մասին կասկած կա, թե վարակված են, պահվում են անասնաբուժական դիտողության տակ (հոդ. 14, կ. 7)։

Հոդ. 31.— Հիվանդացած լինելու կողմից կասկածելի կենդանիների հիվանդության բնույթը պարզելու համար, այլև վարակված տնտեսության մնացյալ յեղջյուրավոր անասունների նկատմամբ կարող են կիրարկվել տուբերկուլինիզացիա և տուբերկուլյոզը ճանաչելու այլ եղանակները։

ԿԱՏԱՂՈՒԹՅՈՒՆ

Հոդ. 32. — Կատաղած կենդանիները սպանվում են (հոդ. 14, կ. 3)։

Հոդ. 33. — Կատաղությամբ հիվանդացած լինելու կողմից կասկածելի

ա) շներն ու կատուները սպանվում են (հոդ. 14, կ. 3)։

բ) մյուս կենդանիները կարող են մնալ անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6) մինչև հիվանդության բնույթի պարզվելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մարդկանց կանոնավոր օգնություն հասցնելու նպատակով, յերբ նրանց կատաղած լինելու կողմից կասկածելի շուն կամ

կատու յե կծում, այս կենդանիները պետք է թողնվեն անասնաբուժական հսկողության տակ անվտանգ պահպանության պայմաններում, մինչև նրանց հիվանդության բնույթի պարզվելը։

Հոդ. 34.— Կատաղած կենդանիների կծած

ա) շներն ու կատուները սպանվում են։

բ) մյուս կենդանիները թողնվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6), և կարող են նախազգուշական պատվաստման յենթարկվել։

Հոդ. 35.— Շներն ու կատուները, յեթե կասկած կա, որ նրանց կատաղած կենդանիներ են կծել, որոշ ժամանակ թողնվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6), իսկ յեթե տերերը կամ նրանց փոխարինողները չցանկանան նրանց հսկողության տակ թողնել կամ հսկողության պայմանները չկատարեն, շներն ու կատուներն սպանվում են։

Հոդ. 36.— Անապահով վայրի սահմաններում բոլոր շները պիտի պահվեն կապած, կամ յերախակալներով։ Իսկ այն շները, որ այս կարգադրության հակառակ արձակ կլինեն կամ առանց յերախակալների, պիտի սպանվեն։

ԱՐՅՈՒՆԱԶՈՍ ՍԵՊՏԻՑԵՄԻԱ

(Ընտանի և վայրի կենդանիների համաճարակ տենդախտ և լանջատարախտ)։

Հոդ. 37.— Արյունազոս սեպտիցեմիայի ժամանակ կիրարկվում են պաշտպան միջոցներ 14 հոդ. մատնանշվածներից, բացի 2, 3, 24, 25 և 28 կետերից։

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ՁԻԵՐԻ ԺԱՄՍՃԱՐԱԿ ՎԻԺՈՒՄՆ

Հոդ. 38։— Վիժելուց հետո հիվանդ կենդանիները պահվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6) իսկ տնտեսության մնացյալ կենդանիները անասնաբուժական դիտողության տակ (հոդ. 14, կ. 7), 14 հոդվածի 5, 8, 14, 15, 26 կետերը կիրարկելով։

Ք Ո Ս

Հոդ. 39.— Հիվանդ և հիվանդացած լինելու կողմից կասկածելի կենդանիների վերաբերմամբ կիրարկվում են 14 հոդվածի 5, 7, 8, 14, 15 և 26 կետերում հիշատակված միջոցները։

ԱՐԽԻՎ

ՎՈՋԽԱՐՆԵՐԻ ԾԱՂԻԿ

Հոդ. 40.— Հիվանդ, հիվանդացած և վարակված լինելու կողմից կասկածելի վոչխարները պահվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6) անապահով տնտեսության կամ վայրի վարակված լինելու կողմից կասկածելի վոչխարներին կարելի յե պատվաստումներ անել (հոդ. 14, կ. 4)։ Բացի սրանից կիրարկվում են պատշաճ միջոցներ 14 հոդվածի 8—14, 17—22, 24—26 կետերում մատնանշվածներից։

Հոդ. 41.— Ծաղկի նախազգուշական պատվաստումները ծաղկից զերծ վայրերում արգելվում են.

Խ Լ Ա Խ Տ

Հոդ. 42.— Այն ձիերն, էշերն ու ջորիները, վորոնց վրա անասնաբուժերը խլախտաներկրայելի նշաններ են գտել, սպանվում են (հոդ. 14, կ. 3)։

Հոդ. 43.— Հիվանդացած լինելու կողմից կասկածելի ձիերն, էշերը և ջորիները թողնվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6), իսկ վարակված լինելու կողմից կասկածելիները—անասնաբուժական դիտողության տակ (հոդ. 14, կ. 7) մինչև հիվանդության բնույթի վորոշվելը սահմանված յեղանակներով։ Բացի սրանից նրանց վերաբերմամբ կիրարկվում են անհրաժեշտ միջոցներ սույն կանոնագրքի 14 հոդվածի 8, 17, 18, 22 և 26 կետերով նախատեսվածներից։

ՁԻԵՐԻ ՀԱՄԱՃԱՐԱԿ ԼԻՄՖԱՆԳՈՒՏ (ԱՖՐԻԿՅԱՆ ԽԼԱԽՏ)

Հոդ. 44.— Հիվանդ և հիվանդացած լինելու կողմից կասկածելի ձիերը պիտի պահվեն անասնաբուժական հսկողության տակ և բժշկվեն (հոդ. 14, կ. կ. 5 և 6)։ Բացի սրանից կիրարկվում են 14 հոդվածի 22 կետում մատնանշված միջոցները։

Ժ Ա Ն Տ Հ Ա Ր Բ Ո Ւ Խ

Հոդ. 45.— Ժանտահարբուխով հիվանդ և հիվանդացած լինելու կողմից կասկածելի ձիերը պիտի պահվեն անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6) և բժշկվեն (հոդ. 14, կ. 5) իսկ վարակված լինելու կողմից կասկածելիները՝ անասնաբուժական դիտողության տակ (հոդ. 14, կ. 7)։

ՁԻԵՐԻ ԻՆՖԼՈՒԵՆՑԱ ՅԵՎ ՎԱՐԱԿԻՉ ԹՈՔԱՏԱՊ

Հոդ. 46.— Հիվանդ և հիվանդացած լինելու կողմից կասկածելի ձիերը պահվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6) և բժշկվում են (հոդ. 14, կ. 5). իսկ վարակված լինելու կողմից կասկածելիները՝ անասնաբուժական դիտողության տակ (հոդ. 14, կ. 7)։

ՁԻԵՐԻ ՋՈՒԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Հոդ. 47.— Վարակված տնտեսության մեջ հիվանդացած և վարակված լինելու կողմից կասկածելի ձիերի զուգավորությունը թույլատրելի չե, հիվանդներն ու հիվանդացած լինելու կողմից կասկածելիները պահվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6) և բժշկվում են (հոդ. 14, կ. 5)։ Վարակված լինելու կողմից կասկածելիները պահվում են անասնաբուժական դիտողության տակ (հոդ. 14, կ. 7)։

ԽՈԶԵՐԻ ԿԱՐՄԻՐ ՔԱՄԻ ՅԵՎ ԺԱՆՏԱԽՏ

Հոդ. 48.— Հիվանդ, հիվանդացած և վարակված լինելու կողմից կասկածելի խոզերը պահվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14, կ. 6) և բժշկվում են (հոդ. 14, կ. 5)։

Հոդ. 49.— Վարակված լինելու կողմից կասկածելի կենդանիներին կարելի յե հարկադրյալ պատվաստումներ անել (հոդ. 14, կ. 4)։

Հոդ. 50.— Անապահով վայրերում կարելի յե նախազգուշական պատվաստումներ անել (հոդ. 14, կ. 4)։

Հոդ. 51.— Այն վայրերում, ուր խոզերի կարմիր քամին ու ժանտախտը շատ նվազ են տարածված կամ ուր այդ հիվանդությունները պատահաբար են մուտք գործել, հիվանդ և հիվանդացած լինելու կողմից կասկածելի խոզերին կարելի յե սպանել (հոդ. 14, կ. 2)։

ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԽՈԼԵՐԱ, ՀԱՎԵՐԻ ԺԱՆՏԱԽՏ, ԹՌՉՈՒՆՆԵՐԻ ԲԿՈՒՌՈՒՅՑ (ԾԱՂԻԿ)

Հոդ. 52.— Հիվանդ, հիվանդացած և վարակված լինելու կողմից կասկածելի թռչունները պահվում են անասնաբուժական հսկողության տակ (հոդ. 14,կ. 6) և բժկվում են (հոդ. 14, կ. 5)։

Հոդ. 53. Խոլերայով վարակված լինելու կողմից կասկածելի թռչուններին կարելի չէ պատվաստումներ անել (հոդ. 14, կ. 4)։

Հոդ. 54.— Թռչունների խոլերայով, հավերի ժանտախտով և բկուռուցով հիվանդանալու հատ-հատ դեպքեր պատահելիս այնպիսի վայրերում, որ մինչ այն գերծ են եղել այդ հիվանդություններից, հիվանդ և հիվանդացած լինելու կողմից կասկածելի թռչուններին կարելի է սպանել (հոդ. 14, կ. 6)։

ՄԱՍ III

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ-ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՏՎԱԾ I

Անասնաբուժական-սանիտարական հսկողություն կենդանիների յեվ հում անասնամթերքների տեղափոխության վրա

Հոդ. 55.— Ցերկաթուղով և ջրային ճանապարհներով կենդանիներ փոխադրելը, անկախ այն հանգամանքից, թե քանի կենդանի և ինչի համար են փոխադրվում, թույլատրվում է միայն այն պայմանով,

ա) եթե վկայական ունին, որ վարակիչ հիվանդություններ չկան այնտեղ, ուր գնված են կենդանիները. այդպիսի վկայական տալիս է պատշաճ անասնաբուժը կամ անասնաբուժակը, իսկ նրանց բացակայության դեպքում՝ իշխանության տեղական մարմինները.

բ) եթե վկայական կա կենդանիների առողջական վիճակի մասին, այն իմաստով, թե վարակիչ հիվանդությունների նշաններ չկան. այդպիսի վկայական տալիս է պատշաճ անասնաբուժը կենդանիների գնության առաջին վայրում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Սույն հոդվածում մատնանշված կանոնները տարածվում են նաև սովորական ճանապարհներով տարվող առևտրաարդյունաբերական, դաղթանական և վաճառահանվող կենդանիների և քոչվորների անասունների վրա։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Հողագործության ժողովրդական Կոմիսարիատի մասնավոր հրահանգով մատնանշված դեպքերում տեղափոխվող կենդանիները նշան են արվում գրոշմով կամ այլ նշաններով, որ հեշտ չմնի վոչնչացնելը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Ցերկաթուղով և ջրային ճանապարհով մատաղ ու մանր կենդանիներ և թռչուններ փոխադրելու կարգը վորոշվում է հատուկ հրահանգով, որ հրատարակում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը պատշաճ գերատեսչությունների համաձայնությամբ։

Հոդ. 55. 56.1. ծանոթության մեջ մատնանշված կենդանիները, յեթե քշելով են փոխադրվում, պիտի գնան Գավգործկոմների վորոշված ճանապարհներովն ու ուղղությամբ և անցնեն սահմանակից գավառներն այն կետերից, որ վորոշվում են հիշյալ գավառների գործկոմների համաձայնությամբ։ Իսկ քոչվորների անասուններն հարեվան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություններից մտնում են Հայաստանի սահմաններն միայն այն կետից, որ վորոշում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը, սույն կանոնագրքի 11 ա. 11 բ. և 11 գ. հոդվածների հիման վրա հրատարակված կանոնների համաձայն։

Հոդ. 57.— Ցերկաթուղով և ջրային ճանապարհներով փոխադրվող արդյունաբերական կենդանիների հոտերը ճանապարհ են քցվում և ընդունվում են բացառապես այդ բանի համար նշանակված և հարմարեցրած կայարաններում ու նավամատույցներում անպատճառ անասնաբուժական զննության պայմանով։

Հոդ. 58. Հում անասնամթերքների արտահանությունը անարգել թույլ է տրվում միայն վարակիչ հիվանդություններից գերծ վայրերից, որ վկայում է պատշաճ անասնաբուժը կամ անասնաբուժակը, իսկ սրանց բացակայության դեպքում գյուղական խորհուրդը գավառակային կամ գավառական Գործկոմն ըստ պատշաճի։

Հոդ. 59.— Վարակիչ հիվանդությունների կողմից անապահով կամ վտանգված հայտարարված վայրերից հում անասնամթերք արտահանելու համար ամեն մի առանձին դեպքում անհրաժեշտ է պատշաճ անասնաբուժի հատուկ թույլտվությունը, որի տեսչության տակ է գտնվում տվյալ վայրը։

Հոդ. 60. Այն հում անասնամթերքները, որ արտահանվում են առանց անասնաբուժի վկայականի վարակիչ հիվանդություններ չեղած տեղերից կամ թե այդ հիվանդությունների կողմից անապահով կամ վտանգված հայտարարված վայրերից, պետք է, նայելով հիվանդությանը, անվնաս դարձվեն տեղումն իսկ, վերամշակվեն մերձակա ոգտագործարանում, իսկ այդպիսի միջոցների անհնարին լինելու դեպքում՝ վոչնչացվեն։

Հոդ. 61. Նեխած մթերքները պիտի վոչնչացվեն կամ վերամշակվեն ոգտագործարանում։

Հոդ. 62. Հում անասնամթերքներն են քերթած մսերն ու նրանց մասերն ու գործարանները, աղած միսը, չհալած ճարպը,

սամոքսները (թափանները), աղիքները, անմշակ կաշիներն ու մորթերը, արյունը, վոսկորները, յեղջյուրները, ամբակները, բուրդը, մազը, խողանակը, բաշերն ու պոչերը։

Հոդ. 63— Յերկաթուղով, ջրային և հասարակ ճանապարհներով կենդանիների ու հում անասնամթերքների փոխադրության կարգն ու պայմանները վորոշվում են այն կանոններով ու հրահանգներով, վոր հրատարակում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը պատշաճ գերատեսչությունների համաձայնությամբ։

ՀԱՏՎԱԾ II

Անասնաբուժա-սանիտարական հսկողություն սպանդանոցների, մսամթերքների յեվ այլ հում անասնամթերքների վրա.

Հոդ. 64.— Ամեն տեսակ ընտանի կենդանիներ մսի համար արդյունաբերական նպատակով մորթելը տեղի պիտի ունենա հատուկ սարք ու կարգով սպանդանոցներում կամ հարմարեցրած ըսպանդավայրերում, վորոնք մշտական անասնաբուժա-սանիտարական հսկողության տակ են գտնվում։

Հոդ. 65.— Սպանդանոցների անասնաբուժա-սանիտարական մասը վարում են անասնաբուժները, իսկ փոքր սպանդանոցներում ու սպանդավայրերում անասնաբուժակները՝ պատշաճ անասնաբուժի ընդհանուր ղեկավարությամբ։

Հոդ. 66.—Սպանդանոցներում և սպանդավայրերում մորթվող բոլոր մսացու կենդանիներն անասնաբուժական զննության պիտի յենթարկվեն մորթելուց առաջ և հետո, իսկ խոսի միսն անպայման պիտի յենթարկվի մանրադիտական հետազոտության տրիխինի (ճաբակի) կողմից։ Քերթած միսն ու նրանց մասերը անպատճառ պիտի գրոշմվին։

Հոդ. 67.— Այն մսամթերքները, վոր թեև վոչ բոլորովին լավ վորակ ունեցող, բայց ուտելու համար թույլատրելի յեն ճանաչված, նախքան ի վաճառ հանելն անվնաս դարձնելու անհրաժեշտության դեպքում (աղելով, խաշելով, ստերիլիզացիայով), յենթարկվում են այդ գործողությանը նույնիսկ սպանդանոցներում կամ հատկապես դրա հարմարեցրած գործարաններում։

Հոդ. 68.—Քերթած միսը, նրա մասերը, գործարանները, այլ և մորթած կենդանիների այլ մթերքներն ու անպետք մնացորդները,

վոր զննության ժամանակ անպետք են համարված ուտելու համար, անվնաս են դարձնում կամ թույլ են տրվում տեխնիկական կարիքների համար, իսկ այդ անհնարին լինելու դեպքում՝ վոչնչացվում են։

Հոդ. 69.— Վոչ ուտելու համար կենդանիներ մորթելը, այլ և անպետք ճանաչված մսամթերքների, դիակների և նրանց մասերի մշակությունն արդյունաբերական նպատակով թույլ է տրվում ոգտագործարաններում և հիվանդ կենդանիների և դիակների շահագործության այլ հատուկ գործարաններում։

Հոդ. 70.— Այն կենդանիները, վոր պահվում են 69 հոդ. մատնանշված, այլ և հում մսամթերքների, մշակության գործարաններում և նրանց պահելու տեղերում, չպիտի թողնվեն ընդհանուր հոտերի ու յերամակների մեջ, իսկ նրանց հիվանդանալու կամ մահվան յուրաքանչյուր դեպքում, ինչպես և նոր բերված կենդանու մասին տերերը կամ նրանց փոխարինողները պարտավոր են անհապաղ տեղեկացնել պատշաճ անասնաբուժին։

Հոդ. 71.— Քաղաքներն ու խոշոր գյուղերը բերվող բոլոր հում մսամթերքները նախ քան ի վաճառ հանելը պատշաճ անասնաբուժա-սանիտարական հսկողության կողմից յենթարկվում են զննության, իսկ խոզի միսը նաև տրիխինոսկոպիայի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սույն հոդվածում մատնանշված տեղերում անասնաբուժա-սանիտարական զննության չենթարկված և այդ զննությամբ սահմանված նշաններ չունեցող մսամթերքների վաճառումն արգելվում է։ Պարտադիր զննության յենթարկվող անասնամթերքների մանրամասն ցանկը սահմանվում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի հրատարկած հրահանգով։

Հոդ. 72.—Մորթած միսը, նրա մասերը և այլ մսամթերքները թույլ է տրվում պահելու տեղերը տանել, յեթե միայն նրանց վրա անասնաբուժա-սանիտարական զննության սահմանված նշանները կան, իսկ պահելու տեղերից դուրս են տրվում միայն անասնաբուժա-սանիտարական զննությունից հետո, վորի մասին վկայական է տրվում։

Հոդ. 73.—Կոմիսարուժարաններում գտնվող գամբիկներն ու այլ ձիերը, բացի մշտական անասնաբուժա-սանիտարական հսկողությունից, կոմիսարուժական սեզոնն սկսվելուց անմիջապես առաջ պիտի յենթարկվեն անասնաբուժական քննության՝ խլախտի

կողմից նրանց ապահով լինելը ստուգելու համար. առանց այդ քննության կումիս ու կեֆիր պատրաստելը թույլ չի տրվում։

Հոդ. 74.—Սույն հոդվածում թված հիմնարկությունների և կենդանիների և հում անասնամթերքների վաճառատեղերի բացման, կահավորման և գործելու պայմանները՝ անասնաբուժա - սանիտարական պահանջների համաձայն, այլ և նրանց անասնաբուժա-սանիտարական հսկողության, մսամթերքների զննության, անպեպք ճանաչելու, նրանց վաճառումն արգելելու և սույն Կանոնագրքի 14 հոդվածի 20 կ. և 29 հոդ. նախատեսված այլ միջոցների կիրարկության կարգը սահմանվում են 13 հոդվածի կարգով հրատարակվող կանոններով ու հրահանգներով։

ՄԱՍ IV.

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՏԵՐԵՐԻ ՅԵՎ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԱՍԻՆ

ՀԱՏՎԱԾ I.

Անասնաբուժական մասի կազմակերպությունը.

ԳԼՈՒԽ I.

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հոդ. 75. Անասնաբուժական գործի բոլոր ճյուղերի անմիջական կառավարչությունն ու ղեկավարությունը վերաբերում և կենտրոնում՝ Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի Անասնաբուժական Վարչությանը, իսկ գավառներում՝ հողային բաժինների համապատասխան անասնաբուժական մարմիններին, որոնց կանոնադրությունն ու շտատները որոշվում են սահմանված կարգով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կարմիր Բանակի Անասնաբուժա - սանիտարական մասի ղեկավարությունն իրագործվում և սույն Կանոնագրքի 2 հոդ. 16 կետի հիման վրա։

Հոդ. 76.— Գավառի սահմաններում անասնաբուժա - սանիտարական ձեռնարկությունների տեխնիկական ղեկավարությունը և նրանց իրագործելու կոչվող անասնաբուժության և այլ պաշտոնյաների ու հիմնարկությունների գործունեության վերահսկողությունը հանձնվում է գավառական անասնաբուժներին։

Հոդ. 77.— Պայքարը կենդանիների համաճարակների դեմ և անասնաբուժա - սանիտարական հսկողությունը ավյալ վայրի ապահովության վրա կենտրոնանում են անասնաբուժական շրջաններում, որոնց ցանցը սահմանում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը գավառական անասնաբուժական մարմինների առաջարկությամբ, նկատի առնելով տեղական վարչական և գյուղատնտեսական պայմանները։

ԳԼՈՒԽ II

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԵՐԻ, ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿՆԵՐԻ ՅԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՈՃԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդ. 78.— Անասնաբուժությամբ զբաղվելու և անասնաբուժական պաշտոններ ունենալու իրավունքը Հ. Ս. Խ. Հ. սահմաններում վերապահվում է միայն անասնաբուժի կամ անասնաբուժակի կոչումն ստացած անձանց։

Հոդ. 79.— Հայաստանում անասնաբուժությամբ զբաղվելու իրավունք է վերապահվում ԽՍՀՄ Անասնաբուժական Ճեմարան ավարտած և այդ կոչման համար որինաստման վկայական ստացած անձանց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ոտար պետությունների անասնաբուժական բարձրագույն դպրոցներից անասնաբուժի կոչման սահմանված վկայական ունեցողների անասնաբուժական գործունեությունը թույլ է տալիս Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը։

Հոդ. 80.— Անասնաբուժակի կոչում շնորհվում է անասնաբուժակների վոչ պակաս քան յեռամյա դասընթացք ունեցող դրպրոց ավարտողներին և համապատասխան վկայական ստացած անձանց կամ այդ կոչման համար սահմանված կարգով քննություն տվածներին։

Հոդ. 81.— 79 և 80 հոդվածներում հիշատակված անասնաբուժերի և անասնաբուժակների, այլև անասնաբուժության սանիտարների, կենդանիներ պայտելու հրահանգիչների, տրիխինոսկոպիստների, լաբորատորիաների պրեպարատորների, սպասավորների և մյուս ոժանդակ անասնաբուժական կազմի իրավունքներն ու պար-

տականությունները վորոշվում են որենսդրական կարգով հրատարակվող մասնավոր կանոնադրություններով։

Հոդ. 82.—Ազատ բժշկությամբ պարապող անասնաբուժերը և բոլոր անասնաբուժականները, թե ազատ պարապողները և թե պետական ծառայության մեջ գտնվողները, կենդանիների վարակիչ հիվանդություններ յերևան հանելու բոլոր դեպքերում պարտավոր են անհապաղ հաղորդել այդ մասին շրջանային կամ այլ պատշաճ անասնաբուժին, մինչև վորի գալը նրանք պարտավոր են միայն նախնական միջոցներ ձեռք առնել վարակման տարածվելու առաջն առնելու համար։

Հոդ. 83.— Պետական ծառայության մեջ գտնվող անասնաբուժերին, բուժականներին և անասնաբուժության այլ աշխատավորներին, այլև նրանց ընտանիքներին, կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ մաքառելու համար իրենց պարտականությունները կատարելու հետևանքով հիվանդանալու, աշխատունակությունը կորցնելու կամ մեռնելու դեպքում պետական ապահովության իրավունք և վերապահվում ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հաստատած հատուկ հիմունքներով։

ՀԱՏՎԱԾ II

Կենդանիների տերերի՝ պաշտոնյաների յեվ վարչական մարմինների պարտականությունները անասնաբուժական միջոցներ ձեռք առնելու վերաբերմամբ։

Հոդ. 84.— Կենդանիների վրա վարակիչ կամ համաճարակ ախտով հիվանդանալու նշաններ յերևալու, առանց անտեսանելի պատճառների հանկարծամահ լինելու կամ միաժամանակ մի քանի միատեսակ հիվանդությունների յերևան գալու դեպքերում կենդանիների տերերը կամ նրանց փոխարինող անձինք պարտավոր են անհապաղ այդ մասին պատշաճ հայտարարություն տալու։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—1.—Սույն հոդվածում հիշատակված հայտարարություններ անելու պարտականությունը տարածվում է նաև այն անձանց վրա, վոր իրենց զբաղմունքի հետևանքով շփումն ունին կենդանիների, նրանց դիակների, մսամթերքների և այլ հում անասնամթերքների հետ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—Կաթնատնտեսական ագարակները կովերի և այծերի հիվանդության յուրաքանչյուր դեպքի մասին տերերը և նրանց փոխարինող անձինք պարտավոր են հայտնել հենց նույն որը։

Հոդ. 85.—Ծանուցումները հղվում են այն անասնաբուժին կամ բուժակին, վորին յենթակա է տվյալ վայրը, կամ անմիջականորեն, կամ տեղական իշխանության մարմինների միջոցով՝ Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի սահմանած կարգով։

Հոդ. 86.—Վարակիչ լինելու կողմից կասկածելի հիվանդություն յերևալու դեպքում հիվանդ կենդանիների տերերը կամ նրանց փոխարինողները, այլև հիվանդության մասին ծանուցումն ստացած տեղական իշխանության ներկայացուցիչները մինչև անասնաբուժի կամ բուժակի գալը պարտավոր են առանձնացնել հիվանդացած կենդանիներին, թույլ չտալ մսի համար մորթելը, թույլ չտալ, վոր անտեսությունից դուրս տարվեն թե հիվանդ և թե առողջ կենդանիները և հում անասնամթերքներն ու կերը։

Հոդ. 87.— Անասնաբուժը կամ բուժակը, վորին յենթակա է տվյալ վայրը, կենդանիների կասկածելի հիվանդության կամ սատկելու մասին տեղեկություն ստանալով, պարտական է գնալ անհապաղ յերևան յեկած հիվանդությունը վորոշելու և նրան վերջ տալու անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար։

Հոդ. 88.—Այն դեպքերում, յերբ կասկած կա թե յեղջյուրավոր կենդանիների ժանտախտ, համաճարակ, թոքատապ և խոզերի վարակիչ հիվանդություն և յերևան յեկել այնպիսի վայրերում, վոր մինչև այդ զերծ և յեղել նրանցից, անասնաբուժին իրավունք և վերապահվում հիվանդությունը ճշտիվ և շուտափույթ վորոշելու համար մեկ կամ մի քանի հիվանդ կենդանի մորթելու տեղական իշխանության և տեղական բնակչության ներկայացուցիչների ընթերակայությամբ։

Հոդ. 89.—Յեթե պատշաճ անասնաբուժը յերևան յեկած հիվանդությունը վարակիչ և գտնում, տեղական իշխանությունը համապատասխան դեպքերում, անապահով տեղում հիվանդությանը վերջ տալու համար ստեղծում է անասնաբուժական գործադիր հանձնաժողով հետևյալ կազմով—անասնաբուժը, տեղական բնակչության ներկայացուցիչը և գավառային գործադիր կոմիտեի ներկայացուցիչը, վոր հանձնաժողովի նախագահն է։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Անասնաբուժական գործադիր հանձնաժողովների ձևավորության սահմանները և գործողությունների կարգը վորոշվում է մասնավոր հրահանգով, վոր հրատարակում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի հետ միասին։

Հոդ. 90.—Գավառի սահմաններում այս կամ այն վայրը վարակիչ հիվանդության կողմից անապահով կամ վտանգված, իսկ հիվանդությունը դադարելուց հետո ապահով հայտարարում է Գավգործկոմը գավառական անասնաբուժի առաջարկությամբ և անհապաղ տեղեկություն է տալիս Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Անհետաձգելի դեպքերում վարակված վայրն ապահով և հայտարարում անասնաբուժական գործադիր հանձնաժողովը, անհապաղ տեղեկացնելով այդ մասին Գավգործկոմին։

Հոդ. 91.—Գավգործկոմը, վարակիչ հիվանդության շատ տարածվելու դեպքում, յուր գավառի այս կամ այն մասը, կամ մի քանի գավառակներ և կամ ամբողջ գավառը հայտարարում է, գավառական անասնաբուժի առաջարկությամբ, անապահով կամ վտանգված, անհապաղ տեղեկացնելով Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գավգործկոմը յուր գավառում վարակիչ հիվանդություններ յերևալու դեպքում տեղեկացնում և սահմանակից գավառների Գործկոմներին։

Հոդ.—91. ա) Յեթե հարևան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություններում վարակիչ հիվանդությունը շատ տարածված լինի և այդ պատճառով, վարակումը Հայաստանի սահմաններն անցնելու առանձին վտանգ առաջ գա, Հողագործության Կոմիսարիատը հատուկ միջոցներ է ձեռք առնում սահմանակից շրջաններում, այդ մասին տեղեկություն է տալիս համապատասխան Հանրապետությունների Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատներին։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՆ.—Սահմանակից գավառներում վարակիչ հիվանդություններ յերևալու դեպքում Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը պարտավոր է տեղեկացնել այդ մասին համապատասխան Խորհրդային Հանրապետությունների Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատներին։

Հոդ. 92.—Մի քանի գավառներից բաղկացած շրջաններն ապահով կամ վտանգված, իսկ հիվանդությունը վերջանալուց հետո՝ վարակումից ազատ և հայտարարում Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի առաջարկությամբ։

Հոդ. 93.—Մի քանի անապահով հայտարարված գյուղերից կամ գավառակներից բաղկացած շրջանում Գավգործկոմը գործադրում և

14 հոդ. 24, 25, 26 և 27 կետերում հիշատակված միջոցները։ Նույն միջոցները մի կամ մի քանի գավառներից բաղկացած շրջաններում գործադրվում են Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի կարգադրությամբ։ 14 հոդ. 28 կետում հիշատակված միջոցները գործադրվում են միայն Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի թույլտվությամբ։ 14 հոդվածի մնացյալ միջոցները գործադրում է անասնաբուժական գործադիր հանձնաժողովը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վտանգված հայտարարված գյուղերում, գավառակներում ու գավառներում Գավգործկոմը կամ Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատն ըստ պատշաճի՝ գործադրում են 14 հոդ. 26 և 27 կետերում մատնանշված միջոցները։

Հոդ. 94.—Տեղական իշխանության մարմինների կարգադրությամբ յուրաքանչյուր գյուղում անասունների գերեզմանոցներ են սարքվում ու պահպանվում, անասնաբուժա-սանիտարական պահանջների համաձայն, տեխնիկական նպատակներով չոգտագործված դիակները թաղելու համար։

ՀԱՏՎԱԾ III.

Տերերի վարձատրությունը վարակիչ հիվանդությունների վերջ տալու նպատակով սպանված յեվ պատվաստումների հետեվանքով սատկած կենդանիների, այլ յեվ վոչնչացրած առարկաների փոխարեն։

Հոդ. 95.—Վարակիչ հիվանդությունները վորոշելու և նրանց վերջ տալու նպատակով սպանված կամ սույն Կանոնագրքով և ի զարգացումն սրա հրատարակվող հրահանգներով մատնանշված դեպքերում արված պատվաստումների հետևանքով սատկած կենդանիների, այլ և վոչնչացրած առարկաների ու կերի փոխարեն տերերին դրամական վարձատրություն է տրվում սույն Կանոնագրք 96—103 հոդվածներում հիշատակված հիմունքներով։

Հոդ. 96.—Տերերին դրամական վարձատրություն է տրվում սպանված և պատվաստումների հետևանքով սատկած կենդանիների և վոչնչացրած առարկաների փոխարեն (հոդ. 95) հետևյալ վարակիչ հիվանդությունների դեպքերում յեղջյուրավոր անասունների ժանտախտի, խոշոր յեղջյուրավոր անասունների համաճարակ թոքատապի, խլախտի և սիբիրախտի։

Հոդ. 97.—Կենդանիների և վոչնչացնելիք առարկաների գնա-

հատությունը, այլ և նրա փոխարեն տրվող վարձատրության չափը վորոշում է անասնաբուժական գործադիր հանձնաժողովը՝ տիրոջ կամ նրան փոխարինող անձի ներկայությամբ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Գնահատությունը տեղի չէ ունենում անկախ այն հանգամանքից, թե վարձատրություն պիտի տրվի թե վոչ։

Հոդ. 98.—Սպանված և պատվաստումների հետևանքով սատկած կենդանիների փոխարեն հատուցվող վարձատրության չափը վորոշվում է այն վերջնական գների համեմատ, վոր պարբերաբար վերաքննում և հաստատում է Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատը։

Հոդ. 99.—Կենդանիների համար վարձատրությունը հատուցվում է գնահատության $^3/_4$-ի չափով, բայց Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի սահմանած վերջնական գներից վոչ ավելի։

Հոդ. 100.—Սահմանվող գինը և հատուցվելիք վարձատրության չափը անասնաբուժական գործադիր հանձաժողովը մոցնում է կենդանիներին սպանելու կամ պատվաստումների հետևանքով սատկելու կամ առարկաների վոչնչացման մասին կազմած արձանագրությունների մեջ։ Արձանագրությունները ներկայացվում են Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի Անասնաբուժական Վարչությանը, իսկ տիրոջը կամ նրան փոխարինողին վկայական է տրվում սահմանված վարձատրությունն ստանալու իրավունքի մասին։

Հոդ. 101.—88 հոդվածում մատնանշված վարակիչ հիվանդությունների ժամանակ հիվանդությունը վարոշելու նպատակով սպանված կենդանիների համար վարձատրություն և տրվում անասնաբուժական գործադիր հանձնաժողովի գնահատության չափով, բայց Հողագործության Ժողովրդական Կոմիսարիատի սահմանած վերջնական գներից վոչ ավելի։

Հոդ. 102.—Վարակիչ հիվանդությունների առաջն առնելու համար վոչնչացրած առարկաների և կերի փոխարեն վարձատրությունը հատուցվում է անասնաբուժական գործադիր հանձնաժողովի սահմանած չափով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Վոչնչացրած քակորի հաժար վարձատրություն չի հատուցվում։

Հոդ. 103.—Սպանված անասունների միսը ուտելու, իսկ կաշին ոգտագործելու թույլատրության դեպքերում անասնաբուժական

գործադիր հանձնաժողովը միսն ու կաշին տալիս և տիրոջը՝ նրանց արժեքն իր գնահատությամբ հաշվակցելով տիրոջը հասանելի վարձատրության դումարին։

Հոդ. 104.—95 հոդվածի համաձայն տերերին հասանելի դրամական դումարները պիտի տրվեն անմիջապես տերերին և չեն կրող առնվել հարկերի, տուրքերի, ապառիկների շինջուցման, այլ և մասնավոր պահանջների հաշվի մեջ։

Հոդ. 105.—Վարձատրություն չի հատուցվում. ա) արտասահմանից յեկած կենդանիների, այլ և նրանց տերերին պատկանող վոչնչացրած առարկաների համար, յեթե կենդանիների վարակիչ հիվանդությունը յերևան գա տվյալ հիվանդության համար սահմանված պայմանաժամից առաջ, հաշվելով այն՝ սահմանն անցնելու որից, բ) սույն Կանոնագրքի 108—112 հոդվածները խախտելու համար դատական վճռով մեղավոր ճանաչված տերերին ու նրանց փոխարինող անձանց։

ՀԱՏՎԱԾ IV.

Պատասխանատվություն անասնաբուժական կանոնագրքի կանոնները խախտելու համար.

Հոդ. 106.—Սույն Կանոնագրքի համաձայն անասնաբուժական ձեռնարկելիքները գործադրելու պարտականություն ունեցող պաշտոնյաները պատասխանատու յեն իրենց գործողությունների կանոնավորության ու օրինականության համար թե վարչական և թե դատական կարգով։

Հոդ. 107.—Անասնաբուժակները և անասնաբուժա-սանիտարական ոժանդակ կազմին պատկանող անձինք առանց հատուկ թույլատվության իրենց կոչմանը կամ պաշտոնին չվերաբերված գործողությունների համար պատժվում են Քրեական Օրենսգրքի 91-րդ հոդվածի համաձայն։

Հոդ. 108—Կենդանիների տերերը կամ նրանց փոխարինողները վարակիչ հիվանդությունների յերևան գալու կամ կենդանիների այդ հիվանդություններից սատակելու մասին պատշաճ իշխանավորներին տեղեկություն չտալու համար պատժվում են Քրեական Օրենսգրքի 216 հոդվածի համաձայն։

Հոդ. 109.—Կենդանիների տերերը կամ նրանց փոխարինողները սույն Կանոնագրքի, այլ և ի զարգացումն սրա հրատարակվող հրա-

Ա 175
II
24121

հանգների և կանոնների թեկադրած միջոցները չգործադրելու կամ այդ միջոցների գործադրությունը դիմադրելու համար պատժվում են Քրեական Օրենսգրքի 86 և 219 հոդվածների համաձայն։

Հոդ. 110.—Անասնաբուժական վկայականները կամ անասնաբուժական հսկողության պաշտոնյաների կնիքների կամ հում անասնամթերքների վրա դրած նշանները կեղծելը պատժվում է Քրեական Օրենսգրքի 189 հոդ. համաձայն.

Հոդ. 111. Կնիքների և հում անասնամթերքների, այլ և նրանց պահելու շենքերի վրայից դրոշմեր և կապարկնիքներ հանելը պատժվում է Քրեական Օրենսգրքի 100 հոդ. համաձայն։

Հոդ. 112.—Սույն Կանոնագրքի 71 հոդվածի ծանոթությամբ նախատեսված մթերքների վաճառումը պատժվում է Քրեական Օրենսգրքի 141 հոդվածի համաձայն։

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Ս. Համբարձումյան
Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Քարտուղար՝ Հ. Տատյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0766467